ԱՄԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հեղինակը հոդվածում անդրադարձել է իրավագիտակցության գործառույթներին և տեսակներին: Ըստ հեղինակի՝ գոյություն ունի իրավագիտակցության երեք գործառույթ՝ ճանաչողական, գնահատման և կարգավորիչ: Հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է նաև իրավագիտակցության տեսակները: Իրավագիտակցությունը օրենսդրության զարգացման, իրավակարգի կայունացման, քաղաքացիների ազատությունների և իրավունքների իրական լինելու կարևոր գործոն է: Իրավագիտակցությունն իր իմաստով, բովանդակությամբ, ըստ կրող սուբյեկտների, բազմատեսակ և բազմաբնույթ է: Սակայն դրանց միավորողը իրավունքն է, որի շուրջ և որի համար դրսևորվում են իրավագիտակցության տեսակները:

Հիմնաբառեր *- իրավագիտակցություն, անհատական իրավագիտակցություն, հասարակական իրավագիտակցություն, խմբային իրավագիտակցություն, տեսական (գիտական) իրավագիտակցություն, պրոֆեսիոնալ իրավագիտակցություն:*

Իրավագիտակցության մեջ միմյանց հետ սերտորեն համատեղվում և փոխներգործվում են երեք բաղադրատարր՝ ճանաչողական, գնահատման և կարգավորող[1]: Դրան համապատասխան առանձնացվում է իրավագիտակցության երեք հիմնական գործառույթ՝ ճանաչողական, գնահատման և կարգավորիչ:

Իրավագիտակցության ճանաչողական գործառույթի շնորհիվ սուբյեկտի մոտ առկա է իրավաբանական գիտելիքների որոշակի մակարդակ, որը հետևանք է մտավոր (մտածողական) գործունեության և արտահայտվում է «իրավական պատրաստվածություն» հասկացությունով:

Գնահատման գործառույթն իրավագիտակցության սուբյեկտի որոշակի հուզական վերաբերմունքն է իրավական կյանքի տարբեր կողմերի և երևույթների նկատմամբ՝ հիմնված կենսափորձի և իրավական պրակտիկայի վրա:

Իրավագիտակցության ճանաչողական գործառույթին համապատասխանում են որոշակի իրավաբանական գիտելիքներ, որոնք հետևանք են ինտելեկտուալ գործունեության:

Գնահատման գործառույթն արտահայտվում է իրավական իրականության հանդեպ մարդկանց զգացմունքների և հույզերի միջոցով:

Իրավագիտակցության բովանդակությունը ներառում է չորս տեսակի գնահատման հարաբերություններ՝

ա) իրավունքի (նրա սկզբունքների, նորմերի, ինստիտուտների) նկատմամբ,

բ) շրջապատի իրավական վարքագծի նկատմամբ (հանցագործության, հանցագործի, իրավախախտի),

գ) իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ (դատախազություն, ներքին գործեր, դատարան և այլն),

դ) իր վարքագծի նկատմամբ (ինքնագնահատում) գնահատումը կատարվում է արժեորման արդյունքում:

Գնահատման օբյեկտ կարող են հանդիսանալ բոլոր իրավական երևույթները՝ իրավունքը և օրենսդրությունը, այլ անձանց իրավական վարքագիծը (իրավախախտումներ, իրավախախտներ), իրավական մարմինները և հիմնարկությունները, այդ թվում՝ նրանց գործունեությունը, սեփական իրավական վարքագիծը (ինքնագնահատում), պետաիրավական տեսությունները և հայեցակարգերը:

Կյանքի և իրավական երևույթների նկատմամբ արժեքային վերաբերմունքի հետևանքով անհատի մոտ առաջանում է նոր կազմավորում՝ ինտելեկտուալ-էմոցիոնալ-կամային, որն անվանում են իրավական դիրքորոշում: Դիրքորոշումը՝ որպես հոգեբանական երևույթ, արտահայտում է անհատի *նախատրամադրվածությունը և միտումը*՝ որոշակի կերպով ընկալել և գնահատել ինֆորմացիան, երևույթները, և պատրաստակամությունը. դրանց նկատմամբ գործել այդ ներքին արժեքներին ու գնահատականներին համապատասխան: Իրավական դիրքորոշումն իրավաարժեքային կողմնորոշումների համակարգ է՝ խարսխված իրավական համոզմունքների վրա:

Իրավագիտակցության կարգավորիչ գործառույթն իրականացվում է իրավական դիրքորոշումների ու արժեքային իրավական կողմնորոշման միջոցով, որն իրենում միավորում է իրավական ակտիվության մնացած բոլոր աղբյուրները: Նման կարգավորման արդյունքը վարքագծային անդրադարձն է իրավաչափ կամ հակաիրավական վարքագծի ձևով:

Իրավագիտակցության կարգավորիչ գործառույթն իրականացվում է իրավական կողմնորոշման դրսևորման միջոցով, որը կարող է արտահայտվել իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագծի ձևով:

Ինչպես իրավացիորեն նշում է ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցը. «Իրավագիտակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ միայն վերացական տրամաբանական իրավական հասկացությունները, կատեգորիաները և այլն, այլ նաև իրավագիտակցության մինչտեսական ճանաչողական միջոցները (իրավական զգացմունքները, կերպարները, խորհրդանիշները և այլն) ինչպես իրավունքի, այնպես էլ պետության (բոլորի համար պարտադիր իշխանությունների իրավական կազմակերպման) գիտակցման (գնահատման և այլնի) ձևերն են»[2]:

Ուստի, ամբողջությամբ կարելի է ասել, որ իրավագիտակցությունն իր զարգացման բոլոր աստիճաններում և իր արտահայտման բոլոր ձևերով, իրավական գիտակցությունից մինչև իրավական հասկացությունները, ոչ միայն իրավունքի և իրավական երևույթների (դրանց իմաստի, հատկությունների, բնութագրերի, գործառութային-կարգավորիչ նշանակության և այլն), այլ, միաժամանակ, նաև պետության պետական-իշխանական երևույթների արտահայտման, գիտակցման, գնահատման ձև և միջոց է:

Հետևաբար, յուրաքանչյուր մարդ կարիք ունի իրավագիտակցության և դրա օգտագործման: Դրա հետ մեկտեղ մարդը հանդես է գալիս որպես,

առաջին՝ իրավունքի ստեղծագործ աղբյուր, օրինականության և իրավակարգի կենդանի մարմին՝ հասարակության և պետության մեջ,

երկրորդ՝ գործողության (անգործության) մեխանիզմ իրավական նշանակություն ունեցող իրադրություններում,

երրորդ՝ վարքագծի գնահատման չափանիշ (իրավաչափ և ոչ իրավաչափ):

Իրավագիտակցությունը օրենսդրության զարգացման, իրավակարգի կայունացման, քաղաքացիների ազատությունների և իրավունքների իրական լինելու կարևոր գործոն է: Կատարյալ իրավագիտակցությունը վկայում է անհատի բարձր և ընդհանուր իրավական կուլտուրայի մասին, նրան դարձնում տարբեր իրավահարաբերությունների լիարժեք մասնակից:

Այսպիսով, իրավագիտակցությունն իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության անբաժան մասն է՝ կատարելով դրանց կառուցակարգի (մեխանիզմի) դերակատարում:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն իրավագիտակցության տարբեր դասակարգումներ:

Իրավական երևույթների իմացության և արտացոլման աստիճանի տեսանկյունից, սովորաբար տարբերում են իրավագիտակցության երեք մակարդակ՝ առօրեական (էմպիրիկ), գիտատեսական և պրոֆեսիոնալ[3]:

Առօրեական իրավագիտակցությունը ձևավորվում է տարերայնորեն, կյանքի կոնկրետ պայմանների, անձնական փորձի և իրավական գիտելիքների ազդեցության ներքո: Այն դրսևորվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակներով: Իրավաստեղծ գործունեության պրոցեսում առօրյա իրավագիտակցությունն ազդում է «ներքևից», այսինքն՝ իրավաստեղծ մարմինը, օժտված լինելով իրավագիտության բարձր մակարդակով (գիտական-տեսական և պրոֆեսիոնալ), պարտավոր է հաշվի նստել ապագա նորմատիվ ակտի հասցեատերերի իրավական հայացքների, պատկերացումների, ապրումների և հույզերի հետ:

Կոնկրետ իրավաստեղծ լուծումների վրա անմիջական ազդեցություն ունեն և էական դեր են խաղում գիտատեսական և պրոֆեսիոնալ իրավագիտակցության մակարդակները:

Գիտական (տեսական) իրավագիտակցությունը, ի տարբերություն առօրեականի, դրսևորվում է կայուն և հաստատուն իրավական գիտելիքների, սոցիալ-իրավական իրականության խորքային վերլուծությունների հիման վրա: Հենց գիտական իրավագիտակցությունն է համարվում (պետք է համարվի) իրավաստեղծ գործունեության անմիջական աղբյուրը:

Պրոֆեսիոնալ իրավագիտակցությունը, ինչպես նշում է Ս. Ստեփանյանը. «Պետական ապարատի ծառայողների իրավագիտակցությունն է, որն այս կամ այն կերպ առնչվում է իրավաստեղծ գործունեության հետ»[4]:

Գիտական (տեսական) և պրոֆեսիոնալ իրավագիտակցության մակարդակների տարբերակման չափանիշն այն է, որ դրանցից յուրաքանչյուրը բովանդակում է ինտելեկտուալ և կամային տարրերի տարբեր հարաբերություն և, հետևաբար, դրանք տարբեր ձևով են «ներքաշված» իրավակազմավորման գործընթացի մեջ[5]:

Գիտական-տեսական իրավագիտակցությունն առավելապես նպաստում է իրավաստեղծ գործունեությանը (գիտական-ճանաչողական և գնահատման գործառույթներով)՝ ապահովելով ընդունվելիք նորմատիվ ակտի գիտական հիմնավորվածությունը:

Սակայն, միայն գիտատեսական իրավագի-

www.journal.lawinstitute.am

տակցությամբ հնարավոր չէ ներդնել գիտության նվաճումները հասարակական պրակտիկայում: Դրա համար գիտատեսական իրավագիտակցության այս կամ այն տարրերը պետք է փոխակերպվեն պետական ապարատի պրոֆեսիոնալ ծառայողների իրավագիտակցության մեջ: Միայն այդպիսի փոխակերպման միջոցով գիտատեսական իրավագիտակցության բովանդակության ինտելեկտուալ տարրերը կարող են օգտագործվել պրակտիկայում որպես կամային դրսևորումներ: Ասվածից հետևում է, որ պրոֆեսիոնալ իրավագիտակցությունը, ի տարբերություն գիտատեսականի, առավել մեծ չափով է նպաստում իրավագիտակցության իրավական գաղափարախոսական և կամային գործառույթների իրականացմանը՝ իրավաստեղծ պրոցեսում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ գիտատեսական և պրոֆեսիոնալ իրավագիտակցությունը չունեն հստակ բաժանարար գծեր, այլ գտնվում են փոխկապակցվածության և փոխազդեցության մեջ, և դրանց սահմանները խիստ պայմանական են ու փոփոխական:

Այսպես, որոշակի գիտատեսական իրավագիտակցությունը, որպես իրավական գաղափարախոսության դրսևորում, ինքնին ենթադրում է ոչ միայն ինտելեկտուալ տարրերի առկայություն, այլ նաև կամային տարրեր: Դրա հետ միաժամանակ անհեթեթ և անմիտ կարող է համարվել այն միտքը, թե իբր պրոֆեսիոնալ իրավագիտակցությունը զուրկ է ինտելեկտուալ տարրերից կամ այդ տարրերն ամբողջությամբ ներառվում են գիտատեսական իրավագիտակցությունից: Ընդհակառակը, պրոֆեսիոնալ իրավագիտակցության տեսակարար կշռի մեծ մասն է կազմում այն ինտելեկտուալ բովանդակությունը, որն ուղղակիորեն ընկալվում է հասարակական պրակտիկայից:

Այսպիսով, իրավունքը կարիք ունի իրավագիտակցության, որպեսզի գործի, կենդանի ուժ հանդիսանա, իսկ իրավագիտակցությունը իրավունքի կարիքն ունի, որպեսզի ձեռք բերի առարկայական գնահատական և սոցիալական արդարություն:

Սակայն, իրավունքը միայն այն դեպքում կարող է կատարել իր առաքելությունը, որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ, երբ այն ոչ միայն գիտակցվել է մարդկանց կողմից, այլ նաև ճանաչվել է որպես հոգևոր արժեք և կենսական անհրաժեշտություն:

Մասնագիտական գրականության մեջ խոսում են իրավագիտակցության հետևյալ մակարդակների մասին՝ անհատական, հասարակական և խմբային[6]:

Անհատական իրավագիտակցությունը իրավունքի մասին կոնկրետ անհատի զգացմունքներն ու պատկերացումներն են: Հասարակական իրավագիտակցությունը զարգանում է առանձին անհատի իրավագիտակցության միջոցով: Սակայն այն ավելի հարուստ է, քան անհատի իրավագիտակցությունը, քանի որ արտացոլում է հասարակության իրավական կյանքն ամբողջությամբ: Անհատական իրավագիտակցությունը չի կարող ընդգրկել հասարակական տարբեր ժամանակաշրջանների կյանքի իրավական բնույթների բազմազանությունը, այն արտացոլում է միայն առանձին, էական գծերը: Կոնկրետ անձի իրավագիտակցությունը ձևավորվում է այն պայմանների ազդեցության ներքո, որոնցում նա ապրում և աշխատում է: Իսկ քանի որ այդ պայմանները միատեսակ չեն, ապա դա հետք է թողնում իրավագիտակցության վրա: Ահա թե ինչու մեկ անձի իրավագիտակցությունը կարող է լինել խորը, պարունակել իրավական բնույթների գիտական գնահատական, իսկ մյուսինը՝ սահմանափակված, հասարակական իրավագիտակցության ընդհանուր մակարդակից հետ մնացող:

Իրավագիտակցության մեջ իրենց արտացոլումն են գտնում ժողովրդի պատմական ավանդույթները, մարդկանց հոգեբանական առանձնահատկությունները, առկա քաղաքական, տնտեսական և մշակութային պայմանները:

Խորհրդային պետականության պայմաններում վարչական և քարոզչական միջոցներով հիմնավորվում և հաստատվում էր «սոցիալիստական իրավագիտակցությունը»: Սակայն իրավական նիհիլիզմի դրսևորումները, հանցավորության բավականին բարձր մակարդակն առկա էր նաև ԽՍՀՄ-ում՝ ընդհուպ մինչև նրա կործանումը:

Անհատի իրավագիտակցության վրա մեծ ազդեցություն են թողնում անձի կրթությունը, մասնագիտական պատկանելությունը, վերաբերմունքը կրոնի նկատմամբ, բնակավայրը, կենցաղական միջավայրը, այդ թվում՝ շփումները ազատազրկման վայրերում եղած անձանց հետ:

Իրավական կյանքում, քաղաքացու իրավագիտակցության զարգացման և դաստիարակության գործում մեծ տեղ է զբաղեցնում ազգային մտավորականությունը: Անկասկած, մտավորականության վերաբերմունքը իրավունքին, օրենքին սերտորեն կապված է նրա քաղաքական իդեալների հետ, պետության նկատմամբ վերաբերմունքի հետ: Հայկական պետության պատմությունը վկայում է մտավորականության միջավայրում պետության և իրավունքի նկատմամբ վերաբերմունքի բացակայության, դրանց կարևորության անտեսման միտումներ:

Հասարակական զարգացման արդի շրջանում մտավորականությունը մեծ պատասխանատվություն է կրում ամբողջ ժողովրդի բարոյական առողջության համար, քաղաքացու, երիտասարդ սերնդի դաստիարակության համար: Հատկապես մեծ է իրավական մտավորականության դերը որպես մասնագիտական իրավագիտակցության կրողների: Նա կրում է բարոյական, ծառայողական պատասխանատվություն օրինականության պահպանման, իրավակարգի հաստատման համար:

Որոշակի առանձնահատկություններով են օժտված շեղված վարքագծով անձանց իրավագիտակցությունը, ազատազրկման վայրում պատիժը կրող անձանց, կրկնահանցագործների իրավական պատկերացումները և զգացումները: Սոցիոլոգիական հետևանքները ցույց են տալիս, որ մի շարք դեպքերում հանցագործություն կատարած անձանց մոտ քրեական օրենսգրքի հոդվածների իմացությունը զուգակցվում է նիհիլիստական վարքագծով իրավունքի նկատմամբ: Օրինակ՝ «օրենքով գողերը» օժտված են յուրահատուկ իրավական հոգեբանությամբ, որը պայմանավորում է նրանց հեղինակությունը հանցավոր միջավայրում:

Շատ կարևոր է հաշվի առնել առանձին մարդկանց իրավագիտակցությունն իրավական դաստիարակության աշխատանքները կազմակերպելիս:

Ամենից լայն հասկացությունը *հասարակական իրավագիտակցությունն* է: Այս հիմքով մենք կարող ենք առանձնացնել նաև ժողովրդի, ազգային իրավագիտակցությունը, ինչպես նաև երկրի բնակչության խմբերի իրավագիտակցությունը՝ երիտասարդության, ավագ տարիքի, քաղաքային բնակչության, գյուղական բնակչության, ըստ կրթական խմբերի, մասնագիտական հատկանիշների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բնութագրական գծերը և առանձնահատկությունները:

Հասարակական իրավագիտակցությունն ընդհանրացնում է իրավական հայացքները, գաղափարները, ավանդույթները, որոնք մշակվում են առաձին մարդկանց (անհատների) կողմից: Գիտական իրավագիտակցությունը և իրավական հոգեբանությունն առանձին անհատների գիտակցությունից դուրս գոյություն չունեն: Նրանք ներառում են բոլոր այն բնորոշը, առավել էականը, որ բովանդակվում է անհատների իրավական գիտակցության մեջ:

Խմբային իրավագիտակցության դրսևորման ձևերն են՝ գիտական հաստատությունների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, պետական առանձին կառույցների (մարմինների, հաստատությունների) համահավաք իրավական գիտակցությունը իրավաքաղաքական երևույթների վերաբերյալ: Օրինակ՝ դատական իշխանության մարմինների իրավագիտակցության աստիճանը և բովանդակությունն արտահայտվում են նրանց կայացրած որոշումներում և իրավական դիրքորոշումներում:

Տեսական (գիտական) իրավագիտակցությունը, ի տարբերություն առօրեականի, ձևավորվում է լայն և խորը իրավական ընդհանրացումների հիման վրա, իրավունքի օրինաչափությունների իմացության և սոցիալ-իրավական իրականության հատուկ հետազոտությունների հիման վրա: Հենց գիտական իրավագիտակցությունը պետք է լինի իրավաստեղծագործության անմիջական աղբյուրը, ծառայի իրավական պրակտիկայի կատարելագործմանը, քանի որ «ամենալավ պրակտիկան դա հաջողված տեսությունն է»: Գիտական իրավագիտակցության արտահայտման ձևերն են՝ նորմատիվ իրավական ակտերը (բուն իրավունքը), իրավագիտությունը, իրավական պրակտիկայի ամփոփումը:

Պրոֆեսիոնալ իրավագիտակցությունն իրավաբանների իրավական գիտակցությունն է: Այն գիտականորեն հիմնավորված, գիտելիքների, համոզմունքների և զգացմունքների կուռ համակարգ է, որոնցով մասնագետը ղեկավարվում է իր գործունեության ընթացքում: Իրավաբանի իրավագիտակցությունը պետք է լինի տեսական: Այն ձևավորվում է հասարակության իրավական համակարգի, իրավունքի էության և դերի, ճանաչման, զանազան իրավական դասընթացների ուսումնասիրման գործընթացում: Իրավաբանական մասնագիտական իրավագիտակցությունը իրավունքի ընդհանուր սկզբունքների, հասարակության իրավական կյանքի մասին տեսական գիտելիքների համակարգի հետ միասին ընդգրկում է նաև որոշակի համակարգված գիտելիքներ իրավունքի ինչ-որ ոլորտից:

Իրավաբանի համար իրավական պատրաստությունը, բնականաբար, ունի վճռական նշանակություն: Այն պետք է ավելի բարձր լինի, քան օրինահպատակ քաղաքացիների իրավագիտակցությունը, տարբերվի իրավունքի սկզբունքների և նորմերի իմացության ծավալով, խորությամբ և ձևականացված բնույթով, իսկ գլխավորը՝ ունակությամբ դրանք կիրառել:

Իրավաբան մասնագետը պետք է աչքի ընկնի իրավունքի նկատմամբ դրական կայուն վերաբերմունքով, որը ենթադրում է իրավական նորմի հետ (օրենսդրի հետ) նրա առավել բարձր աստիճանի համաձայնությունը, դրա կիրառման օգտակարության, անհրաժեշտության և արդարության ըմբռնումը, սովորությունը պահպանել օրենքը: Այդ իսկ պատճառով բուհական կրթության ընթացքում

մասնագիտական գիտելիքները և ունակությունները պետք է ներդաշնակորեն զուգակցվեն յուրահատուկ իրավական էթիկայի արմատավորմամբ:

Իրավաբանի իրավական բանականության և իրավական զգացմունքների առանձնահատկությունն արտահայտվում է նաև մասնագիտական հայեցողության մեջ, որը հանդիսանում է իրավական կարգավորման կատարելագործման առաջարկությունների աղբյուր, իրավունքի կիրառման գործընթացում ծագող հակասությունների չեզոքացման կամ լուծման աղբյուր:

Ինտեսիվությամբ, արտահայտվածության աստիճանով, իրավական գիտելիքների, իրավական դիրքորոշումների և արժեքային կողմնորոշման դրսևորման սրությամբ մասնագիտական իրավագիտակցությունը տարբերվում է օրինահպատակ քաղաքացիների և հանցագործների իրավագիտակցությունից:

Անձանց իրավական պատրաստվածությունը չի սպասվում դրանց ձևական իրավաբանական գիտելիքներով: Կարելի է տիրապետել գիտելիքների, սակայն չկարողանալ դրանք կիրառել: Իրավաբան մասնագետների համար, բացի օրենքի նկատմամբ արժեքային դրական վերաբերմունքից, հավասարապես նշանակալի են և՛ իրավական գիտելիքները, և՛ դրանք կիրառելու ունակությունը: Ի տարբերություն բնակչության, որին բավական է իմանալ իրավունքի սկզբունքները, աքսիոմաները և ամենից անհրաժեշտ նորմերը, իրավաբանները պետք է մանրամասն իմանան իրավունքի այն ճյուղերի աքսիոմաները, սկզբունքները և նորմերը, որոնց հետ նրանք աշխատում են, բավական լավ իմանան մնացած բոլոր հարակից իրավունքի ճյուղերը, իրավունքի աղբյուրները, գիտական գրականությունը և դատական պրակտիկան համապատասխան ճյուղում: Նրանք պետք է պատրաստ լինեն յուրացնելու անհրաժեշտ ծավալով նոր գիտելիքներ իրավունքի ցանկացած ճյուղից, գիտական և տեխնիկական ոլորտներից, որոնք պետք կգան աշխատանքում:

Շարժառիթային-կարգավորիչ բնույթով և կամային ուղղվածությամբ իրավագիտակցությունը կարող է լինել՝ օրենքին (իրավունքին) հավանություն տվող, օրինապահ և օրինախախտ[7]:

Իրավունքին (օրենքին) հավանություն տվող իրավագիտակցության մեջ իրավունքի (գործող օրենքի) պահանջները, նպատակներն ու արժեքները սուբյեկտը գիտակցում և ընձեռում է որպես անվերապահորեն անհրաժեշտ ու օգտակար (իր և ուրիշների, հասարակության համար ամբողջությամբ) և կատարման ենթակա:

Դրան հակառակ՝ իրավախախտ վարքագիծն ուղեկցվում է անձի հետընթացով և իրավագիտակցության էական ձևախեղմամբ, որի հետևանքով անհատի գիտակցության մեջ տիրապետող են դառնում հակահասարակական մղումները, ամենաթողությունը և անպատասխանատվությունը, քամահրանքը օրենքի, օրինականության և իրավակարգի հանդեպ:

Իրավագիտակցության նշված տեսակներն օժտված են հարաբերական ինքնավարությամբ, քանզի ցանկացած տեսակի բովանդակության մեջ կարող են այս կամ այն չափով տեղ գտնել նաև իրավագիտակցության այլ տեսակների բաղադրատարրեր: Սակայն նշված հանգամանքը չի կարելի բացարձականացնել, օրինակ՝ չի կարելի պնդել, որ օրինապահ իրավագիտակցության մեջ կարող է լինել նաև օրինախախտ իրավագիտակցության տարր, սակայն կարելի է պնդել, որ անհատական իրավագիտակցության բովանդակային կազմում կարելի է հանդիպել խմբային կամ հասարակական իրավագիտակցության տարրի: Նույնը կարելի է պնդել գիտական (տեսական) իրավագիտակցության և մասնագիտական (պրոֆեսիոնալ) իրավագիտակցության փոխհարաբերության մասին:

Մասնավորապես, մասնագիտական իրավագիտակցությունը՝ որպես հատուկ իրավաբանական կրթություն ստացած մարդկանց խմբային իրավագիտակցություն, այս կամ այն ձևով ներառում է տեսական (գիտական) իրավագիտակցության որոշ բաղադրատարրեր:

Մասնագիտական (իրավաբանական) իրավագիտակցությունը ներմասնագիտական տարբերությունների հաշվառմամբ, կարելի է բաժանել ներմասնագիտական խմբերի (իրավաբան-գիտնականների իրավագիտակցության և իրավաբան-պրակտիկների իրավագիտակցության) և ենթախմբերի՝ դատավորների իրավագիտակցության, քննիչների իրավագիտակցության, փաստաբանների իրավագիտակցության, իրավաբան-խորհրդատուների իրավագիտակցության և այլն:

Այսպիսով, ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ իրավագիտակցությունն իր իմաստով, բովանդակությամբ, ըստ կրող սուբյեկտների, բազմատեսակ և բազմաբնույթ է: Սակայն դրանց միավորողը, մեծ հաշվով, իրավունքն է, որի շուրջ և որի համար դրսևորվում են իրավագիտակցության վերոնշված տեսակները:

[1] Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 91-92: Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Том 3. Издание 2-е, переработанное и дополненное. Ответ. ред. профессор Марченко М.Н. М., 2013, С. 310.
[2] Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 93:
[3] Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Том 3. Издание 2-е, переработанное и дополненное. Ответ. ред. профессор М.Н. Марченко. М., 2013, С. 391.
[4] Степанян С.С. Теоретические проблемы правообразования в социалистическом обществе. Изд-во АН Арм. ССР. Ереван, 1986, С. 118.
[5] Նույն տեղում, էջ 128:
[6] Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն -2, Դասախոսություններ, ԵՊՀ, Երևան, 2011թ., էջ 230:
[7] Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 2005, С. 271.

Амаля Арутюнян
Соискатель института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Функции и виды правосознания

В статье автор упомянул виды правосознания и функции. По мнению автора- существуют три функции правосознания: познавательная, оценочная и нормативная (регулирующая). В статье автор обстоятельно обсудил также виды правосознания. Правосознание это важный фактор развития законодательства, стабилизации правопорядка, реализации прав и свобод граждан. Своим значением, содержанием, несущими субъектами правосознание многообразное и разнородное. Но объединяет их право, возле которого и для которого отображаются виды правосознания.

Ключевые слова: *правосознание, индивидуальное правосознание, общественное правосознание, групповое правосознание, теоретическое (научное) правосознание, профессиональное правосознание.*

Amalya Harutyunyan
Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of
the National Academy of Science of the Republic of Armenia

SUMMARY

Functions and types of legal conscousness

In the article the author touched upon the types of legal consciousness and their activities. According to the author, there are three functions of legal consciousness: cognitive, assessment and regulatory. In the article the author also thoroughly discussed the types of legal consciousness. Legal consciousness is an important factor in the development of legislation, the stabilization of the legal order, the rights and freedoms of citizens. Legal consciousness in its sense, content and in terms of its carriers, is diverse and varied. But it is the law that unifies them, around which and for which the types of legal consciousness are manifested.

Key words: *legal consciousness, personal legal consciousness, public legal consciousness, group legal consciousness, theoretical (scientific) legal consciousness, professional legal consciousness.*